ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ 1467 թ. ՃԱՌԸՆՏԻՐԸ

1467 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում աղթամարցի հայտնի գրիչ Հայրապետ արեղան սկսում է ընդօրինակել Ճառընտիր մի ժողովածու, բայց հանգամանքների բերումով այն ավարտում է Աղթամարում:

«Եւ արդ, ես՝ անպտուղս ի բարեաց և... սոսկանուն արեղայ Հայրապետ, բազում և մեծ աշխատութեամբ հասուցի զսա յաւարտումն՝ զկէսն ի Սուրբ Էջմիածինն, և զկէսն յաստուածաբնակ կղզին Աղթամար, ընդ հովանեաւ գմբեթահարկ Սուրբ Խաչիս և Սուրբ Սարգիս Զօրավարիս և այլ ամենայն սրբոց՝՝. որ աստ կան հաւաքեալ: Ի հայրապետութեան տեառն Ստեփաննոսի Հայոց Կաթողիկոսի Աղթամարայ շնորհալից Աբոռոյս. ի թւականութեանս Հայոց ՉԺԶ /1467/, ի ժամանակիս, յորում կամէ ընդ հարկի ծառայութեան ազգին նեստոր աց, ի խնդրոյ ֆախրկանց տանուտէր Ցոհաննու»[1]:

Ցավով պետք է նշել, որ Մեծ եղեռնի տարիներին ձեռագրական այլ բազում միավորների հետ կորստի է մատնվել նաև այս ձեռագիրը: Ղևոնդ վարդապետ Փիրղալեմյանը այս ձեռագիրը տեսել է 1865 թ. Վանի Ս. Սահակ եկեղեցում, որտեղից էլ բանաքաղել է հիշատակարանային այս հատվածը[2]:

Որ Հայրապետը ձեռագիրն Էջմիածնում չավարտեց, կային պատմական որոշակի պատճառներ:

ԺԵ դարի սկզբին, Լենկ-Թեմուրի մահից հետո, կործանվեց նոր հսկայածավալ պետություն: Սկսվում են անընդհատ ռազմական ընդհարումներ մի կողմից Թեմուրի որդիների, մյուս կողմից Աղ-Կոյունլու և Կարա-Կոյունլու թուրքմեն ցեղերի միջև: Ջահանշահ տիրակալի օրոք /1437-1467/, հզորանում է Կարա-Կոյունլու ցեղախումբը: Այս ընթացքում, համեմատաբար խաղաղ պայմաններում, 1441 թ. ողջ հայ ժողովրդի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կյանքում տեղի ունեցավ կարևոր մի իրադարձություն: Կաթողիկոսական

---

[1] Նստարք Հայոց, հաւաքեալ և ի լոյս ածեալ ձեռամբ Ղևոնդ վարդապետի Փիրղալէմեան Տոսբեցւոյ Վարագայ վանուց վանականի, Կոստանդնուպօլիս, 1889, էջ 231 /այսուհետ՝ Նստարք/: Տե՛ս նաև ԺԵ դարի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան /այսուհետ՝ ԺԵ դարի հիշատակարաններ/, հ. Բ, Երևան, 1958, էջ 257:

[2] Նստարք, էջ 231:

Աթոռը, դարավոր դեգերումներից հետո, վերահաստատվեց Վաղարշապատ քաղաքում: Կարևորագույն պատմական այս իրադարձությունից հետո վերածնվում և յուրատեսակ աշխուժացում է ապրում Սուրբ Էջմիածնի թե՛ կրոնական և թե՛ մշակութային դերը: Հայաստանի կենտրոններից ու տարբեր գավառներից Մայր Աթոռ են շտապում այնպիսի խոշոր գործիչներ ու գրչության արվեստի վարպետներ, ինչպիսիք են Բաղմա Սեծոփեցի բարունապետը, Հովհաննես կոլոտիկ Հերմոնեցին և այլոք, որոնք անում են ամեն ինչ՝ Էջմիածինը վերադարձնելու իր նախկին փառքին:

1450-ական թթ. վերջին, երբ Ջհանշահն իր արևելյան նվաճումներն էր իրագործում, Հայաստանում դարձյալ վտանգվում է խաղաղությունը: Հարավում Բաղեշի իրադերը փորձում են լաստանավերով ներխուժել Աղթամար՝ «զամենեսեան ի սուր սուսերի մաշելու և զսրբու

աջակցությամբ, Ստեփանոս Կաթողիկոսը անապարում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ իր հետ տանելով մորաբրոջ որդուն՝ Հայրապետ արեղային, որն այստեղ ձեռնարկում է վերոհիշյալ Ճառընտիրի գաղափարումը: Սակայն եթե առաջին դեպքում Ջհանշահի բացակայությունն էր պատճառը, որ Զաքարիա Աղթամարցին թողներ Էջմիածինը, ապա երկրորդ պարագայում՝ Ջհանշահի մահն է պատճառը /1467/, որ Հայրապետ գրիչն անավարտ է թողնում սկսված Ճառընտիրը և Ստեփանոս Կաթողիկոսի հետ վերադառնում Աղթամար, որտեղ էլ ավարտում է այս ձեռագիր ժողովածուն:

Ճառընտիրի հիշատակարանում տեղ գտած «զկէսն ի Սուրբ Էջմիածինն» արտահայտության տողատակում Փիրղալեմյանը ծանոթագրում է. «Ինձ թուի, թէ սոյն Հայրապետ արեղայն ևս գնացեալ էր ընդ Ստեփաննոս կաթողիկոսին Աղթամարայ ի Սուրբ Էջմիածին ...քանզի էր սա այր նշանաւոր և միանգամայն մօրեղբի որդի Ստեփաննոս Կաթուղիկոսին Աղթամարայ»[5]:

Լինելով հմուտ գրիչ, ինքը՝ Ստեփանոս Կաթողիկոսն Էջմիածին պիտի տաներ այնպիսի ճանաչված գրչի, ինչպիսին Հայրապետ արեղան էր: Նրա մասին պահպանված կենսագրական տվյալները ամբողջական չեն, իսկ եղածներն էլ թերի են: Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, անդրադառնալով Ստեփանոս Կաթողիկոսի գործունեությանը, գրում է, որ Հայրապետը Ստեփանոսի հետ պետք է որ գնացած և վերադարձած լինի Էջմիածնից Աղթամար: Եվ եթե «Ճառընտիրի լաւ մասը կրցաւ նա Էջմիածնի մէջ գրել, ուրեմն միջոց մը այն տեղ մնացած էր, և ըստ այսմ Ստեփանոսը 1467-ին Էջմիածինի տիրացած և 1468-ին Էջմիածինէ փախած կրնանք դնել»[6]:

Մենք այն կարծիքին ենք, որ Ստեփանոսը Հայրապետի հետ 1467-ին է թողել Էջմիածինը: Նախ հիշատակարանը, որը խոսում է ձեռագրի ավարտի մասին. «բազում և մեծ աշխատութեամբ հասուցի զսա յաւարտումն... ի թուականութեանս Հայոց ՋԺԶ /1467/»[7]: Այս թվականին մահանում է նաև Ջհանշահ գահակալը, և Հասան Ալին այլ քաղաքականություն է վարում, ուստի Ստեփանոսը չէր կարող ևս մեկ տարի մնալ Էջմիածնի գահի վրա:

Հայրապետի կենսագրությունից հայտնի է, որ որդին է Խաչիկի /Խաչատուր/ և Ոսկիտիկինի, քրոջ որդին է Աղթամարցի Թովմա Մինասեանց նշանավոր վարդապետի, որի կողմից առաջին անգամ՝ 1425 թ. հիշվում է որպես «նորաբողբոջ սարկաւագ», իսկ 1428-ին օգնում է հեռուն թուղթ կոկելով, ապա Աղթամարի վանքի միաբան է դառնում 1441-ին: Լինելով նշանավոր գրիչ, նա օրինակել է բազում Ավետարաններ, Ճառընտիրներ, Մաշտոցներ, Ճաշոց և այլն[8]:

Անդրադառնալով Հայրապետ արեղա գրչի օրինակած ձեռագրերի հիշատակարաններին, նկատում ենք նրա խորին երախտագիտությունն իր հեռու և ուսուցչի՝ ժամանակի մեծ փիլիսոփա և գրչարվեստի գիտակ Թումա Մինասեանցի հանդեպ:

---

[5] Նստարբ. էջ 231:

[6] Մ. Օրմանեան, Ազգապատում, մասն Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 2174:

[7] Նստարբ. էջ 231:

[8] Այս մասին տե՛ս՝. Հրաչյա Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 45: Տե՛ս նաև ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Ա, Բ, Գ, անվանացանկերը:

Հայտնի է, որ Թումանն գործել է 1420-ական թվականներից մինչև 1455 թ., մատենագիր է, գրիչ և ծաղկող: Զբաղվել է նաև երաժշտությամբ: Սիմեոնի և Արղունի որդին է: Ուսանել է հորեղբոր՝ Մկրտիչ կրոնավորի և Բեռու՝ Թումա Միակյացի մոտ, Աղթամարում: Լինելով նույն վանքի միաբանն, ձեռնադրվել է աբեղա, ապա վարդապետ: 1420-ից մինչև մահը գրչության արվեստ է ուսուցանել տեղի դպրոցում՝ վայելելով մեծ համբավ[9]: Ժամանակակիցները մեծ հարգանքով են վերաբերվել նրան՝ անվանելով «անյաղթ փիլիսոփայ»[10] և «պատուական կրօնաւոր»[11]:

Հայրապետից բացի Թումա Մինասեանցի աշակերտներից հայտնի էին նաև Ներսես եպիսկոպոսը և նրա եղբայր Ստեփանոս Աղթամարցի Կաթողիկոսը /որը հետագայում շինություններ է նվիրել Թումա վարդապետին/[12]: Լ. Խաչիկյանի հավաստմամբ, նրա գրած ընդարձակ հիշատակարանները պարունակում են հարուստ և հավաստի պատմական փաստեր և իրավունք են տալիս նրա հեղինակին պատվավոր տեղ գրավելու ԺԵ դարի հայ մատենագիրների շարքում[13]:

1425 թ. օրինակած Ավետարանում Թուման իր հարազատների կողքին հիշում է նաև «զնորաբողբոջ տղայն զՀէրապետ սարկաւագն՝ զքուերորդին իմ. պահեսցէ Քրիստոս Աստուած յամենայն արկածից չարին և ողորմեսցի սմին. ամէն»[14]:

Աղթամարում հաստատված այս խաղաղ ապրումներում՝ էլ ուսուցչի հովանու ներքո անում ու գրչության արվեստի մանրամասներին է ծանոթանում Հայրապետը:

Իսկ 1428 թ. մեկ այլ ձեռագրում նույն գորովանքով Թումանն գրում է. «և նորաբողբոջ քուերորդւոյն իմոյ Հայրապետ կրաւնաւորի, որ աւգնական և ձեռընտու եղև [սմա՝ կոչելով զնիւթ բոլիս]...»[15]:

Նկատելի է մի հանգամանք, որ եթե 1425-ին Թումա Մինասեանցը Հայրապետին կոչում է «նորաբողբոջ տղայ», ապա երեք տարի հետո «տղա» բառը փոխարինվում է «կրաւնաւոր»-ով: Սովորաբար «տղայ» էր կոչվում պատանեկան տարիքի անձը, մանավանդ, որ Հայրապետը սարկավագի աստիճան ուներ, այս շրջանում պետք է լիներ 18-ից 20 տարեկան, այսինքն՝ նրա ծննդյան թիվը կարելի է դնել 1405-ից1407 թթ.:

---

[9] Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 4, էջ 202:

[10] ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 633:

[11] Նույնը, հ. Բ, էջ 128: Տե՛ս նաև՝ Հ. Հ. Հակոբյան, Վասպուրականի մանրանկարչությունը, Երևան, 1976, գիրք Ա, էջ 104

[12] Ն. Ակինեան, «Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ», պատմական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1920, էջ 118, այսուհետ՝ Գաւազանագիրք:

[13] ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 705:

[14] Նույն տեղում, էջ 327: Մ. Մ. հմր. 5542, էջ 240ա: Իր ժամանակի իրավիճակի և քրոջորդուն սպասվելիք «արկածների» մասին Թումանն գրում է. «Աւաղ... դառնութեան ժամանակիս, որ մեք պատահեցաք, վասն զի աշխարհս մեր աւերակ, և սեղանք և դրունք եկեղեցեաց մերոց տապալեալ, և սպասք սրբութեանցն գերի վարեալ և օրհներգութիւնքն Աստուծոյ լռեալ ի բոլոր երկիրս մեր»: Այնուհետև Թումանն, սակայն, առանձնացնում է «խոյակապ Սուրբ Խաչ» եկեղեցին, որն էլ մնացել է հզոր և անսասան ու անպարտելի, «որ և աջ անեղին Աստուծոյ հրեղէն պարիսպ եղիցի սմա՝ պահելով առանց փորձանաց ի պարծանս ամենայն քրիստոնէից»: Նույն տեղում, էջ 325-326:

[15] Նույն տեղում, էջ 377: Մ. Մ. հմր. 6324, 302ա:

1441-ին, Թումանն ծաղկելով Դանիել գրչի օրինակած Ավետարանը, հիշվում է Սարգսի, Խաչիկի, Հովհաննեսի, Ավետիսի և «Հէրպետ»-ի հետ[16]*: Հայրապետի մասին Փիրղալեմյանը ծանոթագրում է. «էր սա քուերորդի Մինասենց Թումայ վարդապետի, և եղև քաջ նստար յաւուրս Ստեփաննոս Գ կաթուղիկոսին Աղթամարայ, որ նստաւ յետ մեծին Զաքարիայի 1464 ամի անդ»*[17]*:*

Երեք տարի հետո, 1444 թ., Թումա Մինասենցը, ծաղկելով մեկ այլ Ավետարան, հիշատակարանում այն միտքն է հայտնում, թե տեսնելով Հայրապետ գրչի փափագն ու սերը, «զոր ունէր առ հոգևորն», և անսալով նրա աղաչանքներին, «յանձն առի և ետու գծագրել զսա քուերորդւոյն իմոյ Հայրապետ աբեղային ի ստոյգ և յընտիր աւրինակէ»[18]*: Նախ նշենք, որ սա առաջին հիշատակությունն է, որտեղ Հայրապետը ներկայանում է որպես աբեղա: Այսպես, արդեն 38 տարեկան հասակում աբեղայական ձեռնադրություն ստացած նորընծային թույլատրվում է ուսուցչի հսկողության ներքո գծագրել, այն է՝ օրինակել ձեռագիր: Հայրապետն իր առաջին գաղափարած ձեռագրում խնդրում է. «Ընդ նոսին և մեզ արարէք յիշման արժանի՝ մեղաւ տառապեալ ոգիս զՀայրապետ սոսկանուն աբեղայս՝ գծագրող տառիս, և գծնաւղսն իմ՝ զԽաչիկ և զՈսկիտիկին, և զեղբայրն իմ զՅոհաննէս, և զքոյրն իմ զՎարդ-Խաթուն, և լի բերանով և բոլորախաւս լեգուաւ Աստուած ողորմի ասացէք մեզ և ձեզ ողորմեսցի Քրիստոս. ամէն»*[19]*:*

1445 թ. Թումանն գաղափարած Մաշտոցում հիշում է Հայրապետին,[20] *իսկ նույն թվականին ավարտած մի գանձարանում խնդրում է հիշել «Հայրապետ սրբակրաւն աբեղայի՝ լերդահատոր հարազատին իմոյ»*[21]*:*

Մեկ տարի անց, 1446 թվականին, գաղափարելով ևս մի Ավետարան իր ուսուցչի՝ Թումա Մինասենցի հսկողության ներքո, հմտանում է որպես գրիչ և հմտությունն իր զարգացնում այս ասպարեզում: Թումանն գրում է. «Իսկ ես՝ ունայնս ...և անարժան ծառայս ծառայիցդ Աստուծոյ Մինասենց Թումայս անուամբ ևեթ աբեղայս՝ լուայ զփափագ և զսէր և ետու գծագրել զաստուածախօս սուրբ Աւետարանս քուերորդոյ իմոյ՝ Հայրապետի սրբակրօն աբեղայի»[22]*:*

1447 թ. Ավետարանում Թումանն հիշում է իր քրոջը և նրա որդուն՝ Հայրապետին[23]*:*

Իսկ 1445 թվականին, իր իսկ ձեռնարկած Ճաշոցի էջերում, Թումանն արդեն չհասցրեց հիշել իր «լերդահատոր» և «սրբակրօն» հարազատ Հայրապետ աբեղային, քանզի Ճաշոցն այս կիսատ մնաց՝ վրա հասած մահվան պատճառով: Այլևս ո՞վ պիտի շարունակեր Թումայի գործը, եթե ոչ իր ուշիմ, փորձառու և հավատարիմ աշակերտ Հայրապետ աբեղան. «Բազում մեծ աշխատութեամբ հասուցի զսա յաւարտումն

---

[16] Նույն տեղում, էջ 524: Մ. Մ. հմր. 5515, 282բ-3ա:

[17] Փիրղալեմյան, Նստարք, էջ 127:

[18] Ժե դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 563: Մ. Մ. հմր. 4829, էջ 298բ:

[19] Նույն տեղում, էջ 564:

[20] Նույն տեղում, էջ 582:

[21] Նույն տեղում, էջ 583: Մ. Մ. հմր. 5521, էջ 435ա:

[22] Նույն տեղում, էջ 595:

[23] Նույն տեղում, էջ 609: Մ.Մ. հմր. 4436, էջ 140բ:

յաստուածարանակ կոգիս Աղթամար»[24], գրում է Հայրապետը: Հարազատների շարքում խնդրում է հիշել «նաև զընտրեալ փիլիսոփայն զՄինասեանց Թումայ՝ զքեռին իմ, որ զԳիրք զայս ի Մենդեենէն մինչ ի Մառզարդարն /իմա՝ Մաղկազարդ-Հ. Հ./ նա է գծագրեալ»[25]: Ապա Հայրապետ գրիչը ցավով արձանագրում է Թումա Մինասեանց վարդապետի մահը. «եւ յայսմ ամի դառն կրսկծանաւք մարմնոյ փոխեցաւ առ Քրիստոս»[26]:

Այսօր վերոհիշյալ Ճաշոցից մնացել է ընդամենը 12 թերթ, այն էլ խիստ մաշված ու պատռված վիճակում: Այն ընդգրկում է Հիսնակաց առաջին կիրակիից մինչև Սուրբ Մենդյան երագալույցի ընթերցվածքների հատակտորները: Այստեղից պետք է եզրակացնել, որ ունենք միայն Հայրապետ գրչի օրինակած հատվածը՝ իր կանոնավոր ու խոշոր ոլորգրով: Գլխավոր հիշատակարանում չունենալով որևէ ակնարկ ծաղկողի մասին, որոշ վկայություններ գալիս են հաստատելու այն փաստը, որ Հայրապետն է սույն Ճաշոցի ծաղկողը: Նախքան գլխավոր հիշատակարանը, որն ունի «Ցիշատակարան սուրբ գրոցս» խորագիրը, Հայրապետը թողել է հետևյալ չափածո հիշատակագրությունը.

«Այս է վաստակ մատանց եղկելի
Եւ մեղապարտ Հայրապետ եղեգնագծի,
Եւ ձեզ ի Հվայելումն յաւետ լիցի,
Եւ կաթ աղաւթից ձերոց ցողեսցէ
Ինձ ի տապան գերեզմանի,
Եւ բուսուսցէ յարն վերջին:

Եւ նորոգեսցէ ի նորոգումն կենաց յարմաւթեանն երկնից. ամէն»[27]:

Ցուրատեսակ հետաքրքրություն է ներկայացնում «եղեգնագիծ» արտահայտությունը, որը վկայում է ձեռագիրը եղեգնյա գրչով գրելու կամ մանրանկարելու փաստը:

Մանրանկարված գլխագրերը պատկերված են թե՛ հանգուցագրով, թե՛ թռչնագրով և թե՛ մարդագրով: Ճա էջի ստորին լուսանցքի աջակողմում իր ողջ հասակով պատկերված է՝ մեկ ձեռքը օրհնության դիրքով առաջ պարզած, իսկ մյուսը ցուպին հենած լուսապսակով և ալեհեր Սուրբ Հովհաննես ավետարանիչ առաքյալը: Նրա գրեթե ոտքերի տակ կարդում ենք. «... աշակերտացն Քրիստոսի՝ Յոհաննու եւ Յակոբայ»[28]:

Իսկ 8ր էջի լուսանցքում կարմիր Ավետարանը կրծքին սեղմած կանգնել է Սուրբ Բարսեղ Կեսարացին. «Շաբաթ օր՝ սրբոյն Բարսղի Կեսարու հայրապետին և Գրիգորի Նիւսացւոյն և Եփրեմի ճգնաւորին»[29]:

Որպես ծաղկող, Հայրապետը հարազատ է Վասպուրականի մանրանկարչական դպրոցի ավանդած սկզբունքներին: Գլխավոր հիշատա-

---

[24] Նույնի Ե. Բ, էջ 57: Մ.Մ. հմր. 9216, էջ 12ա:

[25] Նույն տեղում:

[26] Նույն տեղում:

[27] Մ. Մ. հմր. 9216, էջ 9բ:

[28] Նույն տեղում, էջ 2ա:

[29] Նույն տեղում, էջ 8բ:

կարանի էջերում նա Ճաշոցն իր բնութագրում է որպես «փարթամ գանձս, լուսազարդ և պայծառ մարգարիտս և վարդափթիթ բուրաստանս»[30]:

Չնայած ցուցաբերած մեծ վարպետությանը, որպես մանրանկարիչ Հայրապետն իրեն բնութագրում է «անարհեստս ի յարուեստաւորաց»[31]:

Լինելով բազմավաստակ, փորձառու և Աղթամարի գրչարվեստի դպրոցի ճանաչված վարպետներից մեկը, 1458 թ. Հայրապետ աբեղան իր աշակերտների կողմից, տվյալ դեպքում՝ Հակոբի, հիշվում է որպես «զուսուցիչն իմ՝ զմեծ և զընտրեալ փիլիսոփայն՝ զՀայրապետ կրաւնաւորն. ամէն»[32]:

Մեզ հայտնի առաջին ձեռագիր միավորը, որն ամբողջությամբ ինքնուրույն կերպով օրինակել է Հայրապետ աբեղան, վերաբերում է 1459 թվականին: Ավետարանն այս ընդօրինակվում է Աղթամարի Սուրբ Խաչ և Սուրբ Սարգիս եկեղեցիների հովանու ներքո, որի գլխավոր հիշատակարանում Հայրապետը ներկայանում է որպես «ունայնս և թափուրս յամենայն հոգևոր բարեմասնութեանց»[33]: Ներկայացնելով իր ապրած ծանր ժամանակաշրջանը, գրում է. «ամենայն երկիր երերեալ կայ և տատանեալ ի ձեռաց անաւրէն նեռողաց»[34]: Նա աղաչում է. «Ցիշել ի Տէր սրտի մտաւ զմեղաւոր գծողս զՀայրապետ, և զծնաւղսն իմ զԽաչատուր և զՈսկիտիկին, և զեղբայրն իմ զՅոհաննէս, և զկենակիցն իւր զՇարմէլիք, և զաւակն իւրեանց զՄուրատ սարկաւագ և զքոյրն իմ զՎարդ-Խաթուն, և զՄիրան սարկաւագն, որ աւգնական եղև մեզ ի նոկել բղթիս, և երախտաւոր հեռոյն իմոյ պատուական կրաւնաւորին Մինասեանց Թումին, և ծնողաց նորին, և ամենայն արեան մերձաւորացն. ամէն»[35]:

Հայրապետի աշակերտներից մեկն էլ Միրան սարկավագն է, որը, ինչպես Հայրապետը ժամանակին /1428/, Թումա Մինասեանցի մոտ աշխատանքն իր սկսում է թուղթ կոկելով:

Արագագրիչ Հայրապետ աբեղան նույն թվականին հասցնում է ավարտել ևս մեկ Ավետարան. «Գրեցաւ ծաղիկ Աւետարանս ձեռամբ Հայրապետ աբեղայի, յԱղթամար, ի թվին ՋԸ /1459/[36]»:

Ներսես Ակինյանը գրում է. «Հայրապետ գրիչ Աւետարան մը նաւարտէ ՋԺԳ /1465/ թուին յԱղթամար, ի հայրապետութեան տեառն Ստեփանոսի կաթողիկոսի, ի դառն և ի վշտալից ժամանակիս, յորում ի խիստ և ի նեղութեան և ի չար ծառայութեան կամէ ազգին նեռողաց. զի յոյժ կիզեն և կեղեքեն զազգս քրիստոնէից»[37]:

---

[30] Նույն տեղում, էջ 11բ:

[31] Նույն տեղում, էջ 12ա:

[32] ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 102: Մ. Մ. ամբ. 959, 307բ:

[33] Նույն տեղում, էջ 127: Մ. Մ. ամբ. 5417, էջ 297բ:

[34] Նույն տեղում:

[35] Նույն տեղում, էջ 127-128:

[36] Նույն տեղում, էջ 128:

[37] Գաւազանագիրք, էջ 115:

Նույն՝ 1465-ին Ղարիպշա մահտեսին մի ճաշոց է նվիրում «աստուածային սուրբ աթոռոյս Սուրբ Խաչիս Աղթամարայ»[38] և միաբանների հիշատակման ընթացքում նշում նաև «տէր Հէրապետ փիլիսոփայի»-ն[39]:

Այսպիսով՝ կրոնավոր և գիտնական գրիչ փիլիսոփա Հայրապետ արեղան 1467 թվականին միանում է այն ընտրյալների թվին, որոնց Ստեփանոս Աղթամարցի կաթողիկոսը բերում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, որն իր տեսակի մեջ յուրատեսակ փորձ էր՝ կրկին երկու Աթոռները միասնական տեսնելու: Տեղ հասնելուն պես, կարծում ենք, Կաթողիկոսի պատվերով Հայրապետ արեղան սկսում է Վաղարշապատում օրինակել վերոհիշյալ ճառընտիր ժողովածուն:

Դեռ չավարտած այս ճառընտիրը մահանում է Ջհանշահ գահակալը, որն, ինչպես վերը նշվեց, Զամարիա Աղթամարցի Կաթողիկոսի և Ստեփանոսի ջերմ պաշտպանն էր և նեցուկը: Հասան Ալիի հայածանքներից խուսափելով, Ստեփանոս Կաթողիկոսը թողնում է Ս. Էջմիածինը և յուրայինների հետ վերադառնում Աղթամար: Այստեղ էլ Հայրապետ արեղան կարողանում է ավարտին հասցնել Վաղարշապատում սկսած իր ճառընտիրը:

Հայրապետի կյանքի մնացյալ օրերն անցնում են Սուրբ Խաչի աստվածընկալ կամարների ներքո:

1470 թ. նա գաղափարում է մի Ավետարան, որի ծաղկողն իր եղբորորդի Կարապետն է. «...Կարապետ քահանայն, որ զսուրբ Աւետարանս, որ ծաղկով զարդարեաց»[40]:

Մեկ տարի հետո, 1471 թ., երբ լրացել էր «Վաղարշապատի Մաշտոցի» տասը տարին /գրիչ՝ Ստեփանոս Կաթողիկոս, ստացող՝ Զամարիա Աղթամարցի Կաթողիկոս/, Ստեփանոս Կաթողիկոսի եղբայր Ներսես եպիսկոպոսը, Ստեփանոս Կաթողիկոսի պատվերով, օրինակում է նմանատիպ մի Ձեռնադրության Մաշտոց՝ նախագաղափար օրինակ օգտագործելով Վաղարշապատի Մաշտոցը[41]: Հիշատակարանում Ներսեսը գրում է. «/յիշեցէ/զուսուցիչն մեր զՄինասենց Թումէն, որ բազում աշխատանաւ կրեաց ի վերայ մեր, և զտէր Հէրապետ փիլիսոփայն, որ շատ նեղութիւն կրեցին ի վերայ մեր»[42]: Լինելով Հայրապետի կրտսեր սերնդակիցը, Ներսեսը, հավանական է, աշակերտել է նաև Հայրապետ արեղային: Հիշատակարանի մեկ այլ հատվածում Ներսես եպիսկոպոսը Հայրապետին հիշում է որպես «համշիրամ» եղբայր[43]: Մեր աչքի առջև ունենք ուսուցիչ-աշակերտ սերնդափոխման

---

[38] ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 240: Մ. Մ. հմր. 982, էջ 533ա:

[39] Նույն տեղում:

[40] Նույն տեղում, էջ 303: Մ. Մ. հմր. 8928, էջ 287բ: Հիշատակարանում, ժամանակի դժվարություններին անդրադառնալով, գրիչը գրում է. «Այլ և Բ/2/ամ է, որ սուր բարկութեանն Աստուծոյ, այսինքն է մահտարաժամ /հավանորեն խոսվում է համաճարակի երևույթի մասին – Հ. Հ./ և թանգութիւն ամենայն իրաց, և այս վասն ծաւալեալ մեղաց իմոց վասն որոյ ի ձեռն ձեր սուրբ աղօթիցդ և ամենայն սրբոց բարեխօսութեամն բարձցէ Տէր Աստուած զամենայն տխուր տրտմութիւն տարադէպ պատահման ի յաշխարհէս. ամէն»: Մ. Մ. հմր. 8928, էջ 288ա:

[41] Վաղարշապատի Մաշտոցը, էջ 65:

[42] ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 310: Մ. Մ. հմր. 5702, էջ 241բ:

[43] Նույն տեղում, էջ 309:

մի շղթա, որն էլ, հավանորեն, ապահովում էր տվյալ երկրամասի կամ գավառի յուրահատուկ մանրանկարչությունը, կազմելու արվեստը, թանաքն իր պատրաստման յուրատեսակ կերպով, ձեռագիրն իր ամբողջությամբ՝ թուղթ կոկելուց մինչև պրակակալում, այսինքն՝ գրչարվեստն իր բոլոր դրսևորումներով:

Նույն՝ 1471 թ. Հայրապետ աբեղան ավարտում է «Մայր Մաշտոց» ծիսարանը, որի ծաղկողը դարձյալ Կարապետն[44] է և նրա եղբայր Մուրատը[45]: Ձեռագիրն ավարտելով, Հայրապետն այն հանձնում է «Աղթամարայ Սուրբ Խաչիս և անարատ և մաքուր Սուրբ Աստուածածնի տաճարի դրանս, որպեսզի սպասաւորք Սուրբ տաճարիս ընթեռնուն զսա և Աստուած-ողորմին անմոռաց ասասցեն մեզ»[46]: Այնուհետև տեղեկանում ենք, որ ձեռագիրը գերեվարվել է: Հայրապետը հիշում է նաև Միրանին, «որ գերի գնեց և յուղարկեաց ի յԱղթամար: Քրիստոս զինքն աւրհնէ և զիւր որդիքն. ամէն[47]»:

1476 թվականին կատարելով իր մորաքրոջ՝ Մինա-Խաթունի պատվերը, որը մայրն է Ստեփանոս Կաթողիկոսի և Ներսես եպիսկոպոսի, Հայրապետ աբեղան գաղափարում է մի Ճառընտիր[48]: Լինելով ծնողն իր երկու գրիչ որդիների, այնուամենայնիվ հետաքրքրական է, թե ինչու՞ է իր քրոջ որդուն պատվիրում օրինակելու վերոհիշյալ Ճառընտիրը:

1478 թվականին տիկին Դուրդանեն և իր քույր Շահզադեն Հայրապետին խնդրում են գաղափարել մի Ավետարան, որի ծաղկողը նույնպես Կարապետն է[49]:

Իսկ 1480 թվականին տանուտեր Կարապետի պատվերով անվանի գրիչն օրինակում է մի Մաշտոց «ի դառն և ի նեղ ժամանակիս»[50]:

Չորս տարի անց, 1484 թ., Հայրապետ աբեղան, տեսնելով «զփափագ Գոհարին և զսէրն, զոր ունէր առ հոգևորսն», ավարտում է մի Ավետարան «յաստուածաբնակ կղզիս Աղթամար...»[51]:

Կարապետ ծաղկողի և Հայրապետ գրչի ևս մեկ համագործակցության ենք հանդիպում 1490 թ., երբ Դավլաթ-Խաթուն տիկնոջ պատվերով Հայրապետը ընդօրինակում է ևս մեկ Ավետարան. «Բազում աշխատանօք գծագրեցի զսա ի ստոյգ և յընտիր աւրինակէ՝ կենաւր տառապանօք, ի դառն և ի վշտաբեր ժամանակիս, յորում կամք ընդ հարկի անօրինաց»[52]:

Ուշ դարձնելով պատմության ընթացքին, նկատում ենք, որ այս թվականից սկսած այլևս չենք հանդիպում Հայրապետ աբեղայի կողմից գաղափարած և ոչ մեկ ձեռագիր:

---

[44] Նույն տեղում, էջ 312: Մ. Մ. հմր. 4775, էջ 359ա:
[45] Նույն տեղում, էջ 313:
[46] Նույն տեղում, էջ 312:
[47] Նույն տեղում, էջ 313:
[48] Նույն տեղում, էջ 407:
[49] Նույն տեղում, էջ 431:
[50] Նույն տեղում, էջ 445: Մ. Մ. հմր. 5581, էջ 241ա:
[51] Նույն տեղում, հ. Գ, էջ 58:
[52] Նույն տեղում, էջ 154: Մ. Մ. հմր. 7585, էջ 269ա:

1492 թ. մեզ հայտնի Կարապետ ծաղկող քահանան հիշման է արժանացնում իր ուսուցիչներին՝ «հօրեղբարն իմոյ Հայրապետ սրբակրաւն աբեղային և զՄինասեանց Թումայ արի և քաջ փիլիսոփային»[53]:

Վերոհիշյալ Կարապետ քահանան 1498-ին մի Մաշտոց ծիսարանում գրում է. «Դարձեալ աղաչեմ յիշեցէք ի Քրիստոս և զիս՝ անարժան ծառայս ծառայացդ Աստուծոյ զԿարապետ քահանայս, և զծնաւղքն իմ՝ զՅոհաննէս և զՇարմելիք, և զհաւրեղբայրքն իմ՝ մեծ և զընդրեալ փիլիսոփայքն և զքարտու/ւ/ղարքն զՄինասեանց Թումայն և զՀայրապետ աբեղայքն»[54]:

Այս է մեր ունեցած վերջին տեղեկությունը «մեծ և ընտրեալ փիլիսոփայ և քարտուղար» Հայրապետ աբեղայի մասին:

Այս ամենից հետո կարելի է եզրակացնել, որ Հայրապետ կրոնավորը, հավանաբար, վախճանված պիտի լինի 1490–1491 թթ. ընթացքում, այսինքն՝ 85–86 տարեկան հասակում:

Հայրապետ աբեղայի՝ մեզ հասած ընդհանուր գրչագրական ժառանգությունը հետևյալն է.

ա. ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐ՝ 9 միավոր, որից մեկին մասնակցել է որպես թուղթ կոկող:

բ. ՀԱՅԻՆՏԻՐ՝ 3 միավոր:

գ. ՄԱՇՏՈՑ՝ 2 միավոր:

դ. ՀԱՇՏՈՑ՝ 1 միավոր:

Այսպիսով՝ Հայրապետ աբեղայի ձեռագիր ժառանգության ընդհանուր թիվը կազմում է 15 միավոր, որից 14-ի գաղափարողն ու նաև ծաղկողն է:

Այս փաստերը օգնում են հասկանալու, թե ինչու հենց Հայրապետին պետք է ընտրեր Ստեփանոս Կաթողիկոսը, որպեսզի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գրված ձեռագրով իսկ սրբագործվեր իր մուտքը Սուրբ Էջմիածին և հավերժանար պատմության ընթացքի մեջ:

ՀՈՎԻԿ ՀԱՑՐԱՊԵՏՅԱՆ

---

[53] Նույն տեղում, էջ 187: Մ. Մ. հմր. 4201, էջ 365ա:

[54] Նույն տեղում, էջ 268: Մ. Մ. հմր. 5181, էջ 208ա: